ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

հեռ. /094/ /80 – 53 - 63/
/ 0231 / /6 – 38 – 10/

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ

МУНИЦИПАЛИТЕТ

С. МРГАСТАН

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Մրգաստանի գյուղապետարան
ն/ն 18.19.02.2012

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2012թ. փետրվարի 9-ի թիվ 1 հերթական նիստի որոշումները:

Առդիր 21 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1446-12
«13» 02 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«9» փետրվարի 2012 թվականի N 1

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 9-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | (6)կողմ | (0)դեմ | (0) ձեռնպահ |
|---|---|---|---|

Մ. Հարությունյան ________
Հ. Ասատրյան ________
Վ. Դավթյան ________
Ա. Ասատրյան ________
Հ. Եղիգարյան ________
Ա.Ղամբարյան ________

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

գ. Մրգաստան
2012թ. փետրվարի 9

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 1ՆԻՍՏԻ

ԹԻՎ ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԻՍՏԻ

1.ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Թիվ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ 2012Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

7.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

### ՈՐՈՇՈՒՄ

«9» փետրվարի 2012 թվականի N 2

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 11-ի երկրորդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2012թ. հերթական նիստերը անցկացնել՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 6կողմ (0) դեմ (0) ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Ասատրյան
Հ. Եղիգարյան
Ա. Ասատրյան
Վ. Դավթյան
Ա. Ղամբարյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԱՏՐՅԱՆ

04703556

գ. Մրգաստան
2012թ. փետրվարի 9

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| | | |
|---|---|---|
| Փետրվարի-9 | ժամը 16.00 | թիվ 1 |
| Ապրիլի-4 | ժամը 16.00 | թիվ 2 |
| Հունիսի-4 | ժամը 16.00 | թիվ 3 |
| Օգոստոսի-22 | ժամը 16.00 | թիվ 4 |
| Հոկտեմբերի-10 | ժամը 16.00 | թիվ 5 |
| Դեկտեմբերի-4 | ժամը 16.00 | թիվ 6 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«9» փետրվարի 2012 թվական N 3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2011Թ. ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 3-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի 2011թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | (6)կողմ | (0)դեմ | (0) ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ.Ասատրյան | | | |
| Հ. Եղիգարյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա.Ղամբարան | | | |
| Վ. Դավթյան | | | |

04703556

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [illegible]. ԽԱՉԱՏՐՅԱՆ

գ. Մրգաստան
2012թ. փետրվարի 9

Հավելված 1
Հ.Հ. Արմավիրի մարզի Մրգաստանի
գյուղական համայնքի ավագանու
2012թ. փետրվարի 9-ի թիվ 3-Ն որոշման

# Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ-Ի ԲՅՈՒՋԵՅԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թույլ տվեք Ձեզ ներկայացնել հաշվետու /2011թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը/ ընկած ժամանակահատվածի ընթացքում կատարված աշխատանքները, Իմ աշխատակազմի կողմից իրականացվել է օրենքով սահմանված կարգով պետության կողմից պատվիրակված և համայնքի ղեկավարի կամավոր լիազորություններ, ավագանու որոշումներ:
Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում 2011թ.-ի ընթացքում իրականացնելով իմ նախընտրական քառամյա ծրագիրը, ավագանու որոշումների հիման վրա, հաշվետու ժամանակահատվածում ապահովել եմ գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը:
Մրգաստանի գյուղական համայնքի ավագանին բաղկացած է 7 անդամներից, որոնք իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց վերապահված իրավասությունները:
Իմ կողմից հրավիրվել և վարվել է ավագանու 10 նիստ, որից 4-ը արտահերթ, 6-ը հերթական՝ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով:
Իմ հանձնարարությամբ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Ս. Ղարիբյանը պահպանելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները ժամանակին ապահովել է համայնքի ավագանու որոշումների առաքումը մարզպետարան: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպություններից ստացված գրություններին պատասխանվել է ժամանակին և ապահովել է այդ գրություններում նշված պահանջների կատարումը:
2011թ. դեկտեմբերի 3-ի ավագանու արտահերթ թիվ 6/1 նիստի թիվ 4-Ն որոշմամբ համայնքի ավագանին հաստատեց 23736.0հզ. դրամի հասնող բյուջեն, որի հիման վրա էլ իմ կողմից իրականացվել է պետության կողմից պատվիրակված և համայնքի ղեկավարի կամավոր լիազորություններ:

Այժմ ըստ ոլորտների կատարված աշխատանքների մասին

1.Տեղական հարկերի գծով՝
Օրենքով սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումը, ինչպես նաև կազմակերպվել է տեղական տուրքերի և վճարների համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Հավաքվել և մուծվել է՝
ա)Շենք շինության գույքահարկ՝ 150.0հզ. դրամ 149.8հզ. դրամի դիմաց:
բ)Հողի հարկ՝ 4523.4. հզ. դրամ 4500.0հզ. դրամի դիմաց:
գ)Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալական վճարը կազմել է՝ 175.4հզ. դրամ 300,0 հզ. դրամի դիմաց:
դ)Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 804.5 հզ. դրամ, 600,0 հզ. դրամի դիմաց:
2.Տեղական տուրքերի գծով՝
ա) Ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլատվության համար գանձվել է՝ 36.0 հզ. դրամ 70,0հզ. դրամի դիմաց:

3.Քաղաքաշինության և կումունալ տնտեսության բնագավառում իրականացվել է՝ աղբահանություն:Այդ նպատակով ծախսվել է 220.0հզ. դրամ 220,0 հզ. դրամի դիմաց:
Հաշվետու ժամանակաշրջանում գյուղապետի կողմից իրականացվել է մի շարք ներդրումային ծրագրեր՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին:Այդ ծրագրերի հիման վրա ծախսվել է 1077.7հզ.դրամ: /մասնակի վերանորոգվել է գյուղապետարանի 2 աշխատասենյակները, փոսալցման և խճապատման աշխատանքներ են կատարվել համայնքի փողոցներում՝ 813.1 հազար դրամ/:
Կատարվել է՝ գերեզմանատան կամուրջի վերանորոգում և ջրատար խողովակի վերականգնում 135.0դրամ:
4. Երեխաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու նպատակով վերաբացվել է գյուղի գրադարանը, որը սակայն չունի շենքային հարմար պայմաններ և տեղակայված է մշակույթի տան վթարային շենքում:
Գյուղապետարանի կողմից ընտրված՝ դպրոցի կելեգյալ մարմնի խորհրդի կազմում ավագանու ներկայացմամբ Արշակ Խաչատրյանի միջոցով պահպանվում է կապը գյուղի միջնակարգ դպրոցի հետ:Դպրոցում կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում այդ թվում՝ վերջին զանգի միջոցառումներ, այբենարանի հանդեսներ և վերջապես սեպտեմբերի 1-ը, ուսուցչի օրը, կանանց տոնը և ամանորը արժանանում են գյուղապետարանի և անձամբ գյուղապետի ուշադրությանը:
Հաշվետու ժամանակաշրջանում գյուղապետարանի կողմից հատկացվել է՝ 405.0 հզ. դրամ՝ այդ միջոցառումների կազմակերպման համար:
Սակայն դպրոցը ունի հիմնախնդիրներ, որոնցից կարևորը՝ սպորտ դահլիճի բացակայությունն է:Երեխաները զրկված են սպորտով զբաղվելու և սպորտային պարապունքներ անցկացնելու հնարավորությունից:
5.Սոցիալական ծառայության բնագավառում՝
Մեր կողմից ստացվել է 60 դիմումներ, որոնցից 58-ը զուտ սոցիալական բնույթի են և ամբողջությամբ բավարարվել են:
Մնացած դիմումները քննարկվել են և տրվել է սպառիչ պատասխաններ՝ օրենքով սահմանված կարգով:
Համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի մոտ բնակիչների կողմից եղել է 572 այցելություն, տարբեր բնույթի տեղեկանքներ ստանալու նպատակով:Լսվել և տրվել է սպառիչ պատասխան:
6.Գյուղատնտեսության բնագավառում՝
Մեր կողմից աջակցվել է ազգաբնակչությանը մարզպետարանի կողմից՝ տրամադրվել է պարարտանյութ, որը բաժանվել է ազգաբնակչությանը:Ծրագրից օգտվել են 29 ընտանիքներ 17000կգ. պարարտանյութը բաժանվել է ազգաբնակչությանը:
Համայնքը միշտ կանգնած է գյուղացու կողքին և իրականացնում է սոցիալական բազմաթիվ ծրագրեր այդ թվում՝
7.Խնամակալների և հոգաբարձուների խորհրդի կողմից բազմազավակ անապահով ընտանիքներին կատարված այցերի արդյունքում արժանացել են գյուղապետարանի ուշադրությանը՝ մասնավորապես
Դպրոց հաճախող 1-ին դասարանցիներին գյուղապետարանը նվիրել է պայուսակներ և գրենական պիտույքներ:
0-9 տարեկան համայնքաբնակ երեխաների ամանորյա տոնը գեղեցիկ դարձնելու նպատակով գյուղապետարանի կողմից նվիրվել է նոր տարվա նվերների հավաքածու:
Գնվել են ամանորյա ներկայացման տոմսեր և տրամադրվել դպրոցի տարրական դասարանի աշակերտներին:
Իմ կողմից վավերացվել է 4 կտակ, մուծվել է պետական տուրք 20,0հզ. դրամ:
Մեր կողմից աջակցվել է համայնքի 2 բնակիչներին վերականգնելու իրենց սեփականության իրավունքը:
Իմ կողմից ստեղծված բնակարանային հանձնաժողովի որոշմամբ ապաստան է տրվել 3 անձի:
8.Հասարակական կարգի պահպանության բնագավառում ոստիկանության կողմից տրված տեղեկատվության հիման վրա նախազգուշացվել է 12 մարդ:Հիմնականում Վ.Ի.Վ.Օ. 191-192 հոդվածների խախտումներով:

Մեզ մոտ հաշվառված է մեկ դեպք, որը առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված տուգանք պատժատեսակը լրացնում է հանրային աշխատանքով:
Գյուղը գազաֆիկացված է և ունի շուրջօրյա ջրամատակարարում:
9.Գյուղապետարանը մշտական ուշադրության կենտրոնում է պահում համայնքի զինապարտ քաղաքացիների հաշվառման հարցը:Զինվորական կոմիսարիատի կողմից ուղարկված գրություններին տրվում է սպառիչ պատասխան:Աջակցում ենք զորակոչին:

Գյուղի հիմնախնդիրները

Բազում խնդիրների մեջ ուզում եմ նշել գյուղամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը, որը պատճառ է հանդիսանում, որ գյուղում չկա մշտական աշխատող տրանսպորտային միջոց:Չունենք նաև ավտոկանգառներ:
Համայնքը չունի մսուր –մանկապարտեզ:
Համայնքի նախկին մսուր - մանկապարտեզի շենքը գտնվում է անմխիթար վիճակում: Չնայած,որ բնակեցված է:
Համայնքը չունի գյուղապետարանի շենք՝ իսկ այն շենքը, որտեղ տեղակայված է գյուղապետարանը տուժել է երկրաշարժից և գտնվում է անմխիթար վիճակում:
Այս բազում հարցերի լուծումը նախատեսում ենք 2012թ.-2013թ.-ին:
Հարգելի համագյուղացիներ, հյուրեր խոսքս ավարտում եմ և հույսով եմ, որ համատեղ ջանքերի շնորհիվ մենք կարող ենք հասնել ավելիին:
Հարգելի Մրգաստանցիներ և հյուրեր, աշխատել ենք ինչքան հնարավոր է, իսկ թե ինչպես ենք աշխատել գնահատականը թողնում ենք Ձեզ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

## ՈՐՈՇՈՒՄ

«9» փետրվարի 2012 թվական N 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 29-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի կողմից ստեղծված գույքագրման հանձնաժողովի ակտը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ (6)կողմ ( 0)դեմ (0) ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Ասատրյան
Հ. Եդիգարյան
Ս. Ասատրյան
Ա.Ղամբարյան
Վ. Դավթյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

գ. Մրգաստան
2012թ. փետրվարի 9

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի
ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Առդիր 8 էջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

28 դեկտեմբերի 2011թ. — թիվ 18

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքում ամենամյա գույքագրում անցկացնելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 32-ի առաջին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 5-ի թիվ 5/1 արտահերթ նիստի թիվ 7 որոշումով, համայնքում ամենամյա գույքագրում անցկացնելու մասին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին գույքագրման ավարտի մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

28 դեկտեմբերի 2011թ.
գ. Մրգաստան.
ժ. 16.30

Հավելված
Հ.Հ. Արմավիրի մարզի Մրգաստանի
գյուղական համայնքի ղեկավարի
2011թ. դեկտեմբերի 28-ի թիվ 18
որոշման

ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Կարապետյան

Ա. Խաչատրյան

Հ. Հարությունյան

Ա. Հարությունյան

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ (ԳՈՒՅՔ)

1.Տրանսֆորմատորի շենք

2.մսուր մանկապարտեզի շենք

3.կուլտուրայի տուն

4.սեղան

5.աթոռ

6.համակարգիչ՝ 2 հատ (SAMSUNG)

7.Տպիչ՝ 1 հատ PHASHER 3100 MFP

8.երկաթյա պահարան-2հատ

9.գրապահարան-1հատ

10.փափուկ կահույք-1հատ

11.ավտոմեքենա VAZ 21074-1հատ

12.խոհանոցի համակազմ-1 կոմպլեկտ (40 աթոռ, 11 սեղան)

13գրադարանի շենք?

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ
ԲՈՒԺԿԵՏԻ ԳՈՒՅՔ

1.Պահարան-2 հատ
2.գրասեղան-2 հատ
3.աթոռ-10հատ
4.հետազոտման մահճակալ-1հատ
5.մանկական հետազոտման սեղան-1հատ
6.բազմոց-1հատ
7.լրագրասեղան-1հատ
8.շերտավարագույր-4հատ
9.ցուցատախտակ-2հատ
10հայելի և կախիչ-1հատ
11.լվացարան-2հատ
12.ծորակ-2հատ
13.էլեկտրական տաքացուցիչ-2հատ
14.ավտոմատ անջատիչ-2հատ (63A)
15.ջրի պոմպ-1հատ
16.նորածնի կշեռք-1հատ
17.մանկական ստեղոֆոնենդոսկոպ-1հատ
18.գլխի շրջագիծը չափելու ժապավեն-1հատ
19.ճնշման չափիչ-1հատ
20.մեծահասակների հասակաչափ-1հատ
21.ջերմաչափ-6հատ
22.զոգարանագոք-1հատ

ԳՐԱԴԱՐԱՆ



1.Գեղարվեստական գրականություն-800

2.մասնագիտական գրականություն-150

3.արկածային գրականություն-300

4.ռուսական գրականություն-250

5.մանկական գրականություն-100

6.պատմա-մշակութային-100

7.դասական-200

8.Մարքս, Էնգելս, Լենին-150

9.արտասահմանյան գրականություն-250

10.այլ անուն գրքեր-200

## ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ (ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ)

1. Գյուղատնտեսական նշանակության՝ 142.27

2. Բնակավայրերի՝ 60,4

3. Այլ հողատեսքեր՝ 43,45

4. Արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ նշանակության օբյեկտների՝ 8,92

## ԴՈՒՐՍ ԳՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐ

1.Խոլ-բազմոց և 2 բազկաթոռ

2.սեղան-2հատ

3.գրապահարան-1հատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«9» փետրվարի 2012 թվական N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հատկացնել՝ հիսուն հազար /50.0/ դրամ, համայնքի կենտրոնական փողոցի լուսավորման ցանցի վերանորոգման համար:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ (6)կողմ (0)դեմ (0) ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Ասատրյան
Հ. Եղիզարյան
Ա. Ասատրյան
Վ. Դավթյան
Ա. Ղամբարյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

գ. Մրգաստան
2012թ. փետրվարի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«9» փետրվարի 2012 թվական N 6

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ միջոցառումներ կազմակերպելու մասին

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հատկացնել՝ հարյուր հինգ հազար /105.0/ դրամ, միջոցառումները կազմակերպելու համար:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 6կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Ասատրյան
Հ. Եղիգարյան
Ա. Ասատրյան
Վ. Դավթյան
Ա. Ղամբարյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

գ. Մրգաստան
2012թ. փետրվարի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«9» փետրվարի 2012 թվական N_7____

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ սոցիալապես անապահով ընտանիքներին, դրամական աջակցություն ցուցաբերելու նպատակով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Գայանե Տոնոյանին սկեսրոջ մահվան կապակցությամբ տրամադրել՝ հիսուն հազար /50,0/ դրամ:
2.Վարազդատ Ասատրյանին որդուն վիրահատության տանելու նպատակով՝ հատկացնել քսանհինգ հազար /25.0/ դրամ:
3.Նվարդ Միքաելյանին, որպես անապահով ընտանիք տրամադրել քսանհինգ հազար /25.0/ դրամ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ (6)կողմ (0)դեմ (0) ձեռնպահ

Մ. Հարությունյան ____
Հ. Ասատրյան ____
Հ. Եղիգարյան ____
Ա. Ասատրյան ____
Ա.Ղամբարյան ____
Վ. Դավթյան ____

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

գ. Մրգաստան
2012թ. փետրվարի 9